

Կեչառիսի վանք

Կեչառիսի վանքային համալիրը միջնադարյան Հայաստանի նշանավոր կրոնական ու մշակութային կենտրոններից էր: Գտնվում է Ծաղկաձոր քաղաքի հյուսիս-արևմուտքում: Կեչառիսում ապրել և գործել են ժամանակի խոշոր գիտնականներ ու քաղաքական գործիչներ Գրիգոր Մագիստրոսը, Վասակ Խաղբակյանը, Խաչատուր Կեչառեցին և ուրիշներ:

Համալիրը կազմված է չորս եկեղեցիներից, գավթից և երկու մատուռից: Գլխավոր՝ Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, ըստ հարավային մուտքի վերևի արձանագրության, 1033թ.-ին կառուցել է Գրիգոր Մագիստրոսը: Արտաքին հարդարանքը զուսպ է, արևելյան ճակատը մշակված է երկու «հայկական խորշերով», որոնցից լուսամուտներ են բացված դեպի բեմ: Ի տարբերություն ճակատների պարզության՝ ներսի հարդարանքը բավականին հարուստ է:



Գլխավոր եկեղեցուց հարավ գտնվում է գմբեթավոր Ս. Նշան ոչ մեծ եկեղեցին: Այն որոշակի թվագրված չէ, սակայն, ելնելով XIդ. ճարտարապետական բնորոշ ձևերից և այն պատմական տեղեկությունից, որ Գրիգոր Մագիստրոսը Կեչառիսում 1051թ.-ին ևս մեկ եկեղեցի է կառուցել, ենթադրվում է, որ վերջինս Ս. Նշանն է:

Երրորդ Կաթողիկե եկեղեցին, որը կառուցել է իշխան Վասակ Խաղբակյանը 1203-1214թթ.-ին (հավանաբար՝ Վեցիկ վարդապետի ձեռքով), տեղադրված է համալիրի հարավային մասում, Ս. Նշանի կողքին: Կաթողիկեն իր հարդարանքով Կեչառիսի վանքի եկեղեցիներից ամենաշքեղն է:

Շինությունների հիմնական խմբից արևմուտք՝ 120 մ հեռու, կանգուն է վանքի չորրորդ՝ Ս. Հարություն փոքրիկ եկեղեցին, որը, ըստ շինարարական արձանագրության, կառուցվել է 1220թ.-ին: Արևմտյան ճակատին կից գավիթը եկեղեցու հորինվածքի հետ արտաքինից մի ամբողջություն է կազմում:

Կեչառիսում կան XII-XIIIդդ. բազմաթիվ խաչքարեր, որոնք գունագեղություն են հաղորդում վանքային համալիրին՝ դառնալով նրա բաղկացուցիչ տարրերը: Համալիրի կարևոր կառույցներից է Վեցիկ ճարտարապետի մահարձան-խաչքարը (XIIIդ.), որը կանգնեցրել են նրա ճարտարապետ եղբայրները: Կեչառիսի վանքում են թաղված նաև սելջուկների դեմ մղված ճակատամարտում զոհված Ապիրատյան Գրիգոր իշխանը (1099թ.), Մեծ իշխան Պռոշը (1284թ.):



Կեչառիսի անվան հետ կապված կա ավանդություն, ըստ որի՝ օտար մի բռնակալ ավերելով ու ավարելով իր շուրջը, գալիս հասնում է Մաքրավանք և Կեչառիս գյուղերին:

— Ի նչ լավ վանքեր ունեն, — ասում է նա, երբ տեսնում է այս գյուղերի գեղեցիկ վանքերը:

— Ես լսել եմ, որ այս վանքերին տեղացիք քույր ու եղբայր են համարում, — ասում է նրա գորավարներից մեկը:

— Հա', — մոնչում է բռնակալը ... Դե որ այդպես է, հրամայում եմ քարե շղթաներ պատրաստել և կապել իրար քրոջն ու եղբորը, որպեսզի նրանք բանտարկված լինեն, և հայերը չկարողանան մոտենալ և միայն հեռվից նայեն նրանց ու մղկտան:

Այդպես էլ անում են: Քարե շղթայի ծայրը մի վանքից բերում, միացնում են մյուսին: Դրանից հետո Կեչառիս գյուղը կոչվում է Ժնջրու, այսինքն՝ շղթայված կամ շղթայակիր, մինչև որ հայերը հանում են քարե շղթաները և ծաղկաշատ բնակավայրն անվանում են Ծաղկաձոր:

